2142

№ 57/I

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

1916—17

Տարեշրջանի գործունէութեան

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

13357

ԹԻՖԼԻՍ

Տպարան-Դպրոց «ՀՐԱՏԱՊ» Տ. Նազարեանի

1917

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

1916—17

Տարեշրջանի գործունէութեան

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1917

ԹԻՖԼԻՍ

133574

Տպարան-Դպրոց „ՀՐԱՏԱՊ“ Տ. Նազարեանի
Тифлис, Головин. пр., 41.

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԳԻՏՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԵՐՋՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄԸ 1916—17-Ի ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՅԻՍԻ 20-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Ա.—Միութեան հիմումը եւ բացումը.

Կովկասահայոց մէջ գրականութիւնը, երաժշտութիւնը, թատրոնը ունէին արդէն իրանց հոգածու մարմինները եւ պրոֆեսիոնալ շահերը պաշտպանող հաստատութիւնները, այսինքն Հայ Գրողների Ընկերութիւնը, Հայ Գրասէրների Ընկերութիւնը (Բազու), Երաժշտական եւ Դրամատիք. ընկերութիւնները։ Պլաստիք արուեստները, նկարչութիւնը, արձանագործութիւնը եւ ճարտարապետութիւնը, ինչպէս եւ ձեռարուեստը՝ մնացել էին բաց, չունէին մի ազգային հաստատութիւն, որը կարողանար ուղղակի կերպով հոգ տանել նրանց ծաղկումին եւ առաջադիմութեան։ Ահա 1913 թուականին՝ աշնանը Թիֆլիսում գտնուող հայ արուեստագէտներից մի խմբակ միտք յղացաւ հիմնել մի նոր ընկերութիւն, մի քանի խորհրդակցական նիստում մշակեց կանոնադրութիւնը, որը եւ յանձնուելով պատշաճաւոր իշխանութեան, հաստատուեց 1916 փետրուարին։ Հիմնադիր անդամներն են՝ Եղիշէ Թադէոսեան, Փանոս Թէրլէմէզեան, Գարեգին Լեոնեան, Սարգիս Խաչատրեան, Լեոն Հազարապետեան, Գրիգոր Շարբաբչեան, Դաւիթ Զիսլեան, Մարտիրոս Սարեան, Վարդգէս Սուրէնեանց։

Միութեան բացումը եւ առաջին հանդիսաւոր ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ նոյն 1916 թուի մայիսի 1-ին Արտիստական Ընկերութեան դահլիճում, նախագահութեամբ պ. Շիրվանզադէի եւ ներկայութեամբ բազմաթիւ հան-

դիսականների։ Հիմնադիր անդամները թէ տեղական մամուլի մէջ յայտարարել էին, և թէ առանձին հրաւիրաթերթեր էին ուղարկել թէ քաղաքումս գտնուող և թէ օտար տեղացի համարեա բոլոր հայ նկարիչներին, արձանագործներին և ճարտարապետներին, որպէսզի ներկայ գտնուին առաջին ընդհանուր ժողովին, կամ նամակով յայտնեն իրանց համաձայնութիւնը Միութեանս մէջ մտնելու համար։ Բոլոր այդպիսիները ըստ կանոնագրութեան § 14-ի ծանօթութեան, հիմնադիրների հետ միասին իրաւունք ունէին լինելու Միութեան իսկական անդամ առանց քուէարկութեան։ Ժողովին ներկայ էին և անդամագրուեցին բացի հիմնադիրներից հետևեալ արուեստագէտները.—

Նկարիչներ Վրթանէս Ախիկեան, Ստեփան Գաբայեան, Սարգիս Երկանեան, Ս. Թայիրեան, Միք. Խունունց, տիկ. Մելիք Կարագեօզեան, Գր. Միանսարեան, Աղ. Միրզոյեան, Հմ. Յակոբեան, Արս. Շահմազեան, Եղ. Պատկանեան։

Ճարտարապետներ.—Մ. Աբիսողոմեան, Այվազեան, Պ. Զուրաբեան, Հ. Կարապետեան, Գ. Հալաճեան Գ. Տէր-Միքայէլեան, Կ. Մարգարեան։

Արձանագործներ.—Գ. Կեպինեան. ընդամէնը 19 հոգի, հիմնադիրների հետ միասին 28 հոգի. գրաւոր կերպով ցանկութիւն էին յայտնել անդամագրուելու Թիֆլիսից՝ արձանագործ Միք. Միքայէլեան, Ալէքսանդրապօլից՝ ճարտարապետ Թ. Թօրամանեան, Ախալցխայից նկարիչ Վահր. Գայֆէճեան, Պարիզից արձանագործ Տէր-Մարուքեան, Թիֆլիսից ճարտարապետ Քրիստափոր Տէր-Սարգսեան և ուրիշներ, որով իսկական անդամների թիւը հասաւ 39-ի և նոր անդամների ընդունելութիւնը փակուեցաւ մինչև յաջորդ տարեկան ընդհանուր ժողովը։ Նոյն օրը ժողովի ժամանակ օժանդակիչ անդամներ գրուեցին Խաչատուր և Եղիսաբէթ Աֆրիկեաններ, պ. պ. Համբ. Մելիքեան, Գարեգին վարդապետ, Շիրվանզադէ, Յովհ. Թումանեան, Համ. Առաքելեան, Գէորգ Աբուլեան, տ. Հ. Մարտիրոսեան, Իլիա Սպէնդիարեան, Բէրբէրեան ամուսիններ, Լ. Ղուլեան, Ի. Թայիրեան. Գ. Էդիլեան, բժշկ. Զարգարեան, Մ. Մատենճեան։ Տարուայ ընթացքում օժանդակիչ անդամների թիւը հասաւ 45-ի, որոնց ցանկը տպուած է տեղեկագրի մէջ։ Այսպիսով Հայ Արուեստագէտների Միութեան բացումը և անդրանիկ ընդհանուր ժողովը ընդհանրապէս թողեց լաւ տպաւորութիւն. եղան շնորհաւորանքներ, թէ անձամբ և թէ նամակներով որոնց մասին յիշուած է ժողովի արձանագրութեան մէջ։

—

Բ.—Վարչութեան նիստերը եւ խառն խորհրդակցական ժողովները.

Հայ Արուեստագէտների Միութեան Վարչութիւնը իր առաջին նիստը գումարեց նոյն օրը, մայիսի 1-ին, ուր և ընտրուեցին՝ նախագահ Ե. Թադէոսեան, փոխ-նախագահ՝ Դ. Զիսլեան, քարտուղար Գ. Լևոնեան, գանձապահ Գ. Շարբաբչեան։ Վարչութիւնը անցեալ տարեշրջանում, այսինքն 1916 թուի մայիսի 1-ից մինչև այս տարուայ ապրիլի 30-ը ունեցել է 32 նիստ։ Վարչութեան անդամները ներկայ են եղել այդ նիստերում՝ Գ. Լևոնեան 28 անդամ՝ Ե. Թադէոսեան 27, Գ. Շարբաբչեան 24, Դ. Զիսլեան 21, Թէրլէմեզեան 18. փոխանդամներից՝ Մ. Սարեան 6, Մ. Խունունց 6. Վերաստուգիչի անդամներից՝

Վ. Ախիկեան 18, Ս. Խաչատրեան 18. Բացի վարչական նիստերից եղել են խառն նիստեր ևս, Թիֆլիսում գտնուող իսկական անդամների ներկայութեամբ, որտեղ քննութեան են առնուած մի քանի պատասխանատու խնդիրներ, ինչպէս՝ ցուցահանդէսի ժիւրիի ընտրութիւն, արտաքին յարաբերութիւններ, ընկերութեան համար վարձուելիք շէնքի մասին և այլն։

—

Գ.—Դասախօսութիւններ.

Վարչութիւնս անցեալ տարեշրջանում դասախօսութիւնների գործը անկարող եղաւ լաւ կազմակերպել յարմար ազատ լսարան չունենալու պատճառով. միայն մի դասախօսութիւն տարքեց Երաժշտ. Ընկերութեան դահլիճում. Միութեան իսկական անդամ Վարդգէս Սուրէնեանցը դասախօսեց կլասիք գեղարուեստի մասին։

—

Դ.—Հայ ոճի տարածումը.

Անցեալ տարեշրջանում Վարչութիւնս նկատի առնելով որ թիւրքահայ փախստական հայուհիները Թիֆլիսում շքեղ ձեռագործի արհեստանոց են բաց արել և պէտք ունին հայկական ոճի օրինակների և նմոյշների, մի շարք նկարներ և օրինակներ պատրաստեց և տուեց այդ արհեստանոցը հովանաւորող տ. Թայիրեանին և ձեռարուեստի վարժուհի օր. Մելեանին։ Բացի այդ, երբ Վասպուրականի արծաթագործ վարպետները ցուցադրում էին իրենց աշխատանքները, Վարչութիւնը գնում էր այնտեղ իր ամբողջ կազմով և ցուցումներ ու դիտողութիւններ էր անում թէ անձամբ խօսելով և թէ մամուլի մէջ հրապարակ գալով։

Է.—Ցուցահանդէս.

Վարչութիւնս դեռ իւր գործունէութեան առաջին օրերում որոշեց Թիֆլիսում բաց անել Միութեան անդրանիկ ցուցահանդէսը, բայց երկար ժամանակ չէր գտնում յարմարաւոր շէնք այդ նպատակի համար։ Օր առաջ թէ մամուլի մէջ յայտարարութիւններ տպագրելով և թէ բոլոր հեռու և մօտիկ գտնուող հայ արուեստագէտներին շրջաբերական գրութիւններ ուղարկելով հրաւիրում էր մասնակցել կազմակերպուելիք ցուցահանդէսին։

Վերջապէս այս տարուայ փետրուարին գտնուեց յարմարաւոր շէնք, միայն թէ գիշերային լուսաւորութեամբ, Գօլովինսկի պրոսպէկտի վրայ գտնուող եղբայրք Միլեանների առևտրական տունը՝ որը պատահաբար ազատ էր։ Ճանապարհների անկանոն վիճակը և մանաւանդ արտասահմանի հետ ամեն հաղորդակցութեան կտրուած լինելը հնարաւորութիւն չը տուին անդրանիկ ցուցահանդէսը աւելի հարուստ կազմակերպելու, բայց և այնպէս չը նայելով բոլոր այս դժուարութիւններին, փետրուարի 5-ին յաջողուեց բանալ ցուցահանդէսը բազմաթիւ հանդիսականների և պաշտօնական այցելուների ներկայութեամբ։ Ցուցահանդէսին մասնակցում էին 55 հոգի, որոնք ցուցադրել էին նկարչական, ճարտարապետական և արձանագործական ու գրաֆիկ արուեստների աշխատանքները մօտ 350 կտոր։ Ցուցահանդէսին մասնակցում էին և օտարազգի արուեստագէտներ, թ՝ ով 9 հոգի։

Որպէզի մատաղ սերնդի գեղարուեստական զարգացման նպաստած լինի Վարչութիւնս հրաւէրներ ուղարկեց տեղական հայ միջնակարգ եր-

կու սեռի բոլոր դպրոցներին, աշակերտութեանը ձրիաբար բերել ցուցահանդէսին։

Ընդհանուր առմամբ 28 օրուայ ընթացքում (փակուեց մարտի 5-ին) ցուցահանդէս այցելողների թիւը հասաւ մօտ 15,000-ի։ Ցուցահանդիսում վաճառուեց 100-ից աւելի գործեր, որոնց արժէքը մօտ 18,000 ռուբլի։ Միութեան անդամների վաճառուած գործերից 10% իսկ ոչ անդամներից 15% պահուեց Միութեան օգտին։

Ցուցահանդէսը թէ նիւթապէս և թէ մանաւանդ բարոյապէս մեծ չափով բարձրացրեց հասարակութեան աչքում մեր մատաղ ընկերութեան անունը։ Վարչութիւնս լիայոյս է յաջորդ տարիներում աւելի արժանի երևալ թէ ընկերութեան կոչումին և թէ մամուլի ու հասարակութեան միահամուռ խրախուսանքին։

—

Մանր.—Ցուցահանդէսի բացման օրը երեկոյեան Միութեանս օժանդակիչ անդամ Բէրբէրեան ամուսինները թէյի սեղան սարքեցին հրաւիրելով ցուցահանդէսին մասնակցող բոլոր արուեստագէտներին, ինչպէս նաև պ. պ. Շիվանզադէին, Ցով. Թումանեանին և այլ գրողների ու մանկավարժների. թէյի սեղանի շուրջն եղան ողջոյններ, բարեմաղթութիւններ և շնորհաւորանք։

Ցուցահանդէսի փակման առթիւ փետրուարի 15-ին մի բանկէտ կազմակերպուեց, հրաւիրելով իր օժանդակից անդամներին, Վրաց Նկարիչների Ընկերութեան նախագահին և քաղաքագլխին ու քաղաքային վարչութեան անդամներին։ Բանկէտը կառավարում էր պ. Ա. Խատիսեան. հացակերոյթի միջոցին պր. Միլեան ընծայեց այն 1000 ռուբլի գումարը, որ պէտք է ստանար ցուցահանդէսի շէնքի համար. գումարներ ընծայեցին նոյնպէս և այն անձինք, որոնց անունները յիշատակուած են ընդհանուր նուիրացուցակի մէջ. իսկ պ. Հ. Ս. Մելիքեան խոստացաւ 5000 ռուբլի տալ Հայ Արուեստագէտների շէնքի ապագայ ֆոնդին։

Զ.—Գրադարան.

Միութեանս ջանքերից մէկն էլ եղել է թէ իր անդամների և թէ ուսումնասէրների համար հիմք դնել մի գեղարուեստական գրադարանի, ուր հաւաքուած կը լինին պլաստիք արուեստներին վերաբերող հայ թէ օտար հրատարակութիւններ, ալբոմներ հայրն, սակայն ոչ միայն մշտական շէնք չունենալու, այլ և ժամանակաւոր մի դրասենեակ, մի դիւան չունենալու պատճառով այդ խնդիրը առժամանակ յետաձգուած է աւելի բարեյաջող հանգամանքների։ Զը նայելով դրան, Միութեան անդամներից պ. պ. Շարբաբչեան, Թադէոսեան, Լեւոնեան, Վահանեան ցանկութիւն են յայտնել այդ նպատակին նուիրաբերել գրքեր և գեղարուեստական հանդէսներ։

—

Է.—Հրատարակութիւններ.

Մեր ընկերութեան կանոնադրութեան § 3-ի դ. կէտը իրաւունք է տալիս գեղարուեստական հրատարակութիւններ լոյս ընծայել. ալբոմներ, գրքեր, հանդէսներ. բայց ներկայ ժամանակում, երբ թղթի և տպագրութեան գները սոսկալի չափերով բարձրացուած են, և Միութիւնս էլ մինչև ցուցահանդէսի բացումը դեռևս միջոցներ չունէր այդպիսի ծախքեր անելու, այս անգամ բաւականացաւ միայն լուսանկարել տալ առաջին ցուցահանդէսում ցուցադրուած գործերից մօտ 50 հատ, (Իւրաքանչիւր արուեստագէտից 1—3 գործ), որպէս զի երբ պատերազմը վերջանայ և մատչելի դառնան տպագրութեան պայմանները, հրատարակէ մի ալբոմ. լուսանկարների ծախսերի հա-

ժար Միութեանս օժանդակիչ անդամ. պ. Խ. Աֆրիկեան նուիրաբերել է 500 ռուբլի։

—

Ը.—Մրցանակաբաշխութիւն.

Վարչութիւնս դեկտեմբ. վերջերին ստացաւ երկու գրութիւն պ. Տիգրան Աֆրիկեանից և պ. Արտաշէս Էնֆիաճեանից՝ միանման բովանդակութեամբ, որոնց մէջ գրութեան հեղինակները պատրաստակամութիւն են յայտնում վճարել տարեկան՝ պ. Տ. Աֆրիկեան 500 ռուբ. իսկ պ. Ա. Էնֆիաճեան 250 ռուբ. գեղարուեստական մրցանակաբաշխութեան համար։ Նուիրատուների ցանկութիւնն է, որ մրցանակ տրուի այնպիսի ժանրային նկարների, որոնց նիւթը վերցուած կը լինին հայ—ազգային պատմական կեանքից։ Վարչութիւնս թէ մամուլի մէջ և թէ առանձին ուղերձ գրութեամբ յայտնելով իր շնորհակալութիւնը նուիրատու պարոններին, մշակեց կանոններ այդ մրցանակաբաշխութեան համար և յայտնեց մամուլի մէջ, որ բոլոր հեռու և մօտիկ եղող հայ նկարիչները կարողանան մասնակցել։ Որոշուեց 500 ռուբ. տալ լաւագոյն աշխատանքին որպէս ա. մրցանակ, իսկ 250 ռուբ. լաւին՝ որպէս բ. մրցանակ։ Ժիւրին ընտրուելու է Թիֆլիսում գտնուող կարող գեղարուեստագէտներից՝ առանց ազգի խտրութեան։ Մրցանակաբաշխութիւնը նշանակուած է դեկտմ. 30-ին։ (1917 թ.)։

—

Թ.—Ֆօնդ «Գեղարուեստական տուն» շենքի համար.

Վարչութեանս գործունէութեան կարևորագոյն տեղերից մինը բռնելու է այն, որ որոշել է ապագայում Թիֆլիսում կամ բուն հայկական վայրերից մէկում կառուցանել մի շինութիւն, որը կը պարունակէ Միութեան ապագայ թանգարանը, գրադարանը, պատկերասրահը, գրասենեակը, բիւրօն և այլն։ Ֆօնդ հիմնելու այս որոշումը կենդանութիւն ստացաւ երբ փետրուարի 15-ի Միութեանս կազմած բանկէտում պ. Հ. Ս. Մելիքեան խոստացաւ այդ նպատակի համար նուիրաբերել 5000 ռուբլի։ Բայց նախ քան լայն շրջաններում այս մասին յայտարարելը և կամ գրամներ հանգանակելը, Միութեանս անդամներից ոմանք իրանք սկսեցին ստորագրել, որից և գոյացաւ 1000 ռուբլու չափ մի գումար։

—

Ժ.—Կորուստներ.

Հայ Արուեստագէտների Միութիւնը իր գոյութեան առաջին իսկ տարում ունեցաւ զգալի կորուստներ իր իսկական անդամների մէջ. 1916 թուին երկաթուղային կատաստրոֆին զոհ գնաց ճարտարապետ Գարեգին Հալաճեանը, իսկ ապրիլի 30-ին Թիֆլիսում մեռաւ իր գործունեայ և եռանդուն անդամներից նոյնպէս ճարտարապետ Քրիստափոր Տէր-Սարգսեանը։ Վարչութիւնս երկուսի էլ յիշատակը յարգելու համար որոշումներ ունի կայացրած։

—

ԺԱ.—Նուիրաբերութիւններ.

Միութիւնս բացի իր հաշուեցուցակում յիշուած գումարներից, իր ապագայ թանգարանի համար նուէր ստացաւ մի պատկեր պրոֆ. Պալէնովից (Մոսկուա) որին և Վարչութիւնս ուղարկեց մի շնորհակալական ոճաւոր ուղերձ հայերէն և ռուսերէն լեզուներով։

ԺԲ.— Արտաքին գործունեութիւն.

Վարչութիւնս անցեալ տարեշրջանում ունեցել է հետևեալ մասնակցութիւնը այլ և այլ հաստատութիւնների հետ և դէպքերի առթիւ։

Ա.—1916 թ. յունիսին հրաւէր ստանալով Վեհ. Կաթողիկոսին ընդունելու կարդադիր մասնաժողովից մասնակցել ընդունելութեան հանդէսին, ներկայ է եղել ամբողջ կազմով։

Բ.—1916-ի դեկտեմբերին հրաւէր ստանալով, մասնակցել է Հէնրիկ Սէնկեվիչի յիշատակին նուիրուած հանդիսին, ուղարկելով իր ներկայացուցիչը և ոճաւոր ուղերձ։

Գ.—1917 ի յունվարին հրաւէր ստանալով Վրաց Գեղարուեստական և Պատմա-Ազգագրական ընկերութիւններից՝ Վարչութիւնս ամբողջ կազմով ներկայ է եղել այդ ընկերութիւնների ջանքերով Փառաց Տաճարում յունվարի 8 ին Ֆրեսկոների ցուցահանդէսի բացման և պրոֆ. Թաղայշվիլիի դասախօսութեան։

Դ.—1917 մարտի 31-ին Գեղարուեստը Խրախուսող Կովկասեան Ընկերութիւնից հրաւէր ստանալով, մասնակցել է ապրիլի 7-ին կայացած Կովկասեան արուեստագէտների խառն ժողովին, ուղարկելով իր ներկայացուցիչներն։

Ե.—1917-ին ապրիլին Վարչութիւնս իր ամբողջ կազմով մասնակցել է բանաստեղծ Ծատուրեանի յուղարկաւորութեան և թաղման առթիւ եղած ծախսերին։

Զ.—Ապրիլի վերջերին Հայ Գրողների Ընկերութիւնից ստացուել է մի գրութիւն, որով նորակազմ Հայկազեան Ընկերութեան պէտքերի համար խնդրում էր ուղարկել նրանց հայ արուեստագէտների ցանկը. վարչութիւնս ուղարկել է բոլոր իրան յայտնի եղած հայ նկարիչների, ճարտարապետների և արձանագործների ցանկը։

ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1916 թ. մայիսի 1-ին, ցերեկւայ ժամ 12-ին, Արտիստական Ընկերութեան դահլիճում կայացաւ Թիֆլիսում նորերս կազմակերպւած «Հայ Արուեստագէտների Միութեան» առաջին ընդհանուր ժողովը. ներկայ էին Թիֆլիսում գտնուող արուեստագէտների մեծամասնութիւնը՝ 24 հոգի (նկարիչներ, ճարտարապետներ, քանդակագործներ), գեղարուեստի միւս ճիւղերի և գրականութեան ու մասաւոր—հասարակական բաւական թւով գործիչներ և բազմաթիւ գեղարուեստասէր հիւրեր։

Ժողովը բաց արեց պ. Գ. Լևոնեան և հիմնադիրների կողմից ողջունելով ժողովականներին, առաջարկեց ընտրել ժողովի նախագահ և քարտուղար, աւելացնելով որ հիմնադիրների կողմից զեկուցում անելու պատիւը տրուած է իրանց աւագ ընկերոջը՝ պ. Վ. Սուրէնեանցին։ Ժողովը նախագահ ընտրեց պ. Շիրվարզադէին և քարտուղար՝ Գ. Լևոնեանին։

Պ. Շիրվանզադէ գրաւելով նախագահական աթոռը, առաջինը ողջունեց նոր ընկերութեան երևան գալը և մի գեղեցիկ ճառով պաշտպանելով այն միտքը թէ՝ չը կայ գեղարուեստ առանց հայրենիքի, հրաւիրեց պ. Վ. Սուրէնեանցին հիմնադիր անդամների կողմից անելու իւր զեկուցումը։

Պ. Վ. Սուրէնեանց ընդարձակ կերպով բացատրելով այն շարժառիթը, որը դրդել է կազմակերպել մի այդպիսի ընկերութիւն, գեղարուեստը հայրենիք ունենալու և չունենալու մասին, բերեց մի շարք օրինակներ եւրոպական ազգերից, որ իւրաքանչիւր ազգ, իւրաքանչիւր ժողովուրդ ունեցել է և ունի իւր ուրոյն արուեստը, ուրոյն ոճը։ Գալով հայ նկարչութեան, նա յիշեց մի քանի նշանաւոր անուններ մեր միջնադարեան նկարչութեան պատմութիւնից, խօսքը հասցնելով մինչև անցեալ դարի հռչակաւոր հայ նկարիչ Յովհաննէս աղա Այվազովսկին, որը, զեկուցանողի ասելով, ցանկութիւն է ունեցել իւր ժամանակին մի նման ընկերութիւն հիմնել։ Այնուհետև ճառախօսը շեշ-

տեց թէ ինչ նշանաւոր տեղ է գրաւում գեղարուեստի կիրառումը կրթական-դաստիարակչական կեանքում լուսաւոր երկրներում և թէ ինչ խոշոր դեր ունի կատարելու մեր ազգաթիկ կեանքում գեղարուեստական ընկերութիւնը՝ «եթէ միայն, վերջացրեց իր խօսքը յարգելի արուեստագէտը, սիրով եւ եռանդով գործեն իմ ընկերները եւ հասարակութիւնն էլ սէր ունենայ դէպի այդ կուլտուրական հաստատութիւնը։

Այնուհետև նախագահը դարձաւ ժողովականներին, որ ըստ օրակարգի այդ զեկուցումից յետոյ ժողովը զբաղուելու է վարչութեան ընտրութեամբ, իսկ նախ քան ընտրութիւններին անցնելը ինքը կուզենար իմանալ թէ արդեօք ժողովականներից խօսելու ցանկութիւն ունեցող կա՞յ թէ ոչ։

Ժողովականների միջից Արուեստագէտների Միութեանը առաջին ողջունական խօսքն ուղղեց պ. Յովհ. Թումանեանը Հայ Գրողների Ընկերութեան կողմից։ Նա ասաց մօտաւորապէս հետևեալը—

Ասում են «գեղարուեստը հայրենիք չունի».— Եթէ այդ նախադասութեան բառերը տեղափոխենք, կարող ենք ասել «հայրենիքը գեղարուեստ ունի՞» ես կասեմ «այո». ազգերն ունեն իրանց գրականութիւնը, երաժշտութիւնը, ճարտարապետութիւնը, ինչպէս ամեն երկիր ունի իրա յատուկ կլիման. ուրեմն այդ արուեստներն էլ ունեն իրանց հայրենիքը։ Իւրաքանչիւր ազգի մէջ ուրոյն ձևով է զարգանում և ուռճանում գեղարուեստի այս կամ այն ճիւղը։ Մեր ազգի մէջ, այս դառն օրերին—շարունակեց ճառախօսը—ես նկատում եմ վերածնունդ. և այդ շատ մեծ երևոյթ է մեր կեանքի կենսունակութեան համար։ Սրտառուչ է մանաւանդ այն հանդամանքը, որ այս ընկերութեան հիմնադիրների թւում մենք տեսնում ենք «զաղթական» նկարիչներ, որոնց նկարներն, ով գիտէ, դեռ պատերազմի դաշտերումն ու ճանապարհներին են ընկած։ Ուրեմն ողջունելով մեր ազգի կենսունակութիւնը ողջունում եմ և այս նոր ընկերութիւնը, ցանկանալով միևնոյն ժամանակ, որ նա չը տեսնի այն դառն օրերը, ինչ վիճակուեց տեսնել մեր միւս ընկերութիւններին։

Պ. Ե. Լալայեան խօսեց Հայոց Ազգագրական Ընկերութեան կողմից։ Մի ազգի յարատև գոյութիւնը ապահովուած է, եթէ այդ ազգն ունի երկու գիտակցութիւն՝ կուլտուրական և ազգային ինքնուրոյն զարգացման. կենսունակութեան մշտավառ հուրը այդ երկու գիտակցութեան յարաճուն ընթացքն է. եթէ նոյն իսկ բոյսերը իրանց միջավարում կարող են ուռճել և զարգանալ, ով կարող է ժխտել որ մեր արուեստն էլ իր ինքնուրոյն և հարազատ զարգացման համար իր միջավայրը պիտի ունենայ։ Հայոց գեղարուստ, հայ ճարտարապետութիւն եղել է և կայ, և եթէ մենք անգիտակից ենք, դա մեր տգիտութիւնից է, որ նշանակում է թոյլ է մեր ազգային ինքնագիտակցութեան գաղափարը։ Նոր ընկերութեան առաջ բաց է գործունէութեան լայն ասպարէզ, ցանկանանք յաջողութիւն և եռանդ։

Պ. Հ. Առաքելեան։ «Մշակը» իւր գոյութեան ընթացքում միշտ խրախուսել է գեղարուստը և մանաւանդ հայ գեղարուեստը։ Այստեղ «գեղարուեստը հայրենիքը չունի» առացուածքին այլ բացատրութիւն են տալիս. ես հասկանում եմ այսպէս, որ եթէ ասում են «արուեստը չունի հայրենիք» նշանակում է նա հաւասարապէս մատչելի է բոլոր ազգերին, այնքան մեծ է նրա նշանակութիւնը և վեհ՝ նրա լեզուն։ Անշուշտ իւրաքանչիւր ազգ իւր արուեստն ունի և պէտք է որ ունենայ, իւր ազգի արուեստը չը սիրողը, չը գնահատող մարդը չի կարող ըստ արժանոյն գնահատել օտար, ընդհանուր արուեստները, ինչպէս որ իւր ընտանիքը իւր ազգը չը սիրող մարդը չի կարող անկեղծ կօսմօպոլիտ, մարդասէր լինել։ Ողջունում եմ նոր ընկերութիւնը, որը նուիրուած պիտի լինի մայրենի գեղարուեստի շահերին և ծառայելով մայրենի գեղարուեստին օգտակար կը լինի ընդհանուր կուլտուրական կեանքին։

Գարեգին վարդապետ. Ես սոսկ մի անհատ, հայ եկեղեցու մի պաշտօնեայ, շնորհաւորում եմ այս նոր ընկերութեան հիմնուելը, մի ընկերութիւն, որ իրան նուիրելու է հայ կեանքի մէջ գեղեցիկ արուեստները կիրառելու գործին։ Բարին, գեղեցիկը, ճշմարտութիւնը իրանց յարակից ունին գիտութեանը, կրօնը

և գեղարուեստին։ Այս բոլորը ծագում են մի արմատից և այդ արմատը մարդկային հոգին է։ Կրօնը բարձրագոյն գեղարուեստն է, գեղեցկի, ճշմարտի պաշտամունքը։ Թող նոր ընկերութիւնը կարողանայ հայ ժողովրդի մէջ գեղեցկի ստեղծագործութեան տարերքը զարթեցնել՝ միշտ բարձր պահելով բարու աղնիւի և գեղեցկի դրօշակը։

Բժ. Ա. Զարգարեան. Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեան կողմից ողջունական խօսքեր ասելով, գտաւ որ իրանց Ընկերութիւնն այսուհետև սերտ կապ է ունենալու Հայ Արուեստագէտների Միութեան հետ, գեղարուեստական շքեղ հրատարակութիւններ լոյս ընծայելու գործում։

Պ. Դ. Էդիլեան (մանկավարժ), իր ուրախութիւն ու շնորհաւորանքն յայտնեց նոր ընկերութեան, առարկելով որ դպրոցական կեանքում շատ մեծ գործ է կատարում գեղարուեստական դաստիարակութիւնն ու կրթութիւնը, և ինքը միշտ կողմակից է եղել որ դպրոցի դռները լայն բաց արուի գեղարուեստի առաջ։

Պ. Սպ. Մելիքեան. Հայ Երաժշտական Ընկերութեան կողմից համակրական խօսքեր ուղղելով նոր ընկերութեան, կասկած յայտնեց հասարակութեան այսպիսի ջերմ վերաբերմունքի յարատեւութեան մասին։ Նա օրինակ բերեց Երաժշտակ. Ընկերութեան առաջին ընդ. ժողովը, որը նոյնպէս բազմաժարդ էր, ուր նոյնպէս շնորհաւորանքների և ողջոյնների ճառեր ասուեցին, բայց երկրորդ ժողովներին մնացել էին միայն վարչութեան անդամները։ Պ. Մելիքեան յորդոր կարդաց հասարակութեան, որ միշտ հետաքրքրուի իր կուլտուրական ընկերութիւնների կեանքով և չը թողնի որ ամբողջ դործի ծանրութիւնը ճնշի պաշտօնական անձերին։

Խօսեցին նոյնպէս նկարիչներ Ա. Շահմազեան և Հ. Ցակոբեան, որոնք անելով իրանց դիտողութիւնները, ցանկութիւն յայտնեցին ընկերութեան առաջադիմութեան համար։

Եղան և այլ խօսողներ, որոնց թւում պ. Պ. Աբելեան ուշադրութիւն հրաւիրեց այն կարևոր հանգամանքի վրայ, որ մեր հասարակական կեանքում ոչ մի

133374

բան այնպէս լաւ չի կազմակերպուած ինչպէս՝ հայերի օտարացման գործը, և ոչ մի բանում մենք այնքան հաւերաշխ չենք որքան հայութիւնից հեռու փախչելու մէջ... այս առթիւ է որ վերին աստիճանի ուրախալի եմ գտնում այնպիսի մի կուլտուրական—ազգային ընկերութեան երևան գալը և ջերմագին ողջունում։

Ուսուցիչ Ց. Աղաբաբեան շնորհաւորելով հայ դպրոցների կողմից, ցաւ յայտնեց որ նոր ընկերութեան հիմնադիրները անտես են առել մեր ծխական դպրոցների նկարչութեան ուսուցիչներին և վարժուհիներին և նրանց չեն հրաւիրել ժողովի։

Հիմնադիրների կողմից պ. Թերլեմեզեան բացատրեց որ լրագիրներում յայտարարուած էր, որ հրաւիրուած են բոլոր արուեստագէտները, իսկ ով նրանցից ուզում է մտնել ընկերութեան մէջ, որպէս իսկական անդամ, բաւական է որ նրան որպէս նկարիչ ճանաչեն և յանձնարարեն կոմիտէի անդամներից միայն 2-ը։

Պ. Նախագահը փակեց խօսողների ցանկը, պ. Աղաբաբեանի դրած հարցը համարելով ուշադրութեան արժանի և արձանագրել տուեց, որ կոմիտէն աչքի առաջ ունենայ այդ խնդիրը։

Այնուհետև պ. Շիրվանզադէն կարդաց այն գրութիւնները, որոնք ստացուել են թէ օտար քաղաքացիներից և թէ Թիֆլիսի այն արուեստագէտ ընկերներից, որոնք չեն կարողացել ներկայ գտնուիլ, բայց համակրանք են յայտնում և յաջողութիւն ցանկանում նոր Միութեան։ Այդ նամակների թւում կային ճարտարապետ Թ. Թորամանեանի, նկարիչներ Ա. Ֆետվաճեանի և Վ. Գայֆէճեանի գրութիւնները։ Շնորհաւորական և խրախուսանքի նամակներ ուղղել էին նաև երաժշտագէտ Ց. Տէր-Դաւթեան, պ. Տ. Նազարեան և տիկ. Զաբ. Զաւրեան։

Պ. Նախագահը յայտնեց ժողովականներին որ մշտական օժանդակ-անդամներ գրուելով վճարել են ընկերութեան՝ պ. Խ. Աֆրիկեան իր ամուսնու հետ 300 ռբ. պ. Ն. Մելիքեան 100 ռբլի. տ. Ի. Թայիրեան 50 ռուբլի, և Լ. Ղուլեան 15 ռուբլի։

Ժողովի հարցերն սպառուած համարելով պ. Նա-

խագահը կանոնադրութիւնից կարդաց ընտրութիւն-ներին վերաբերեալ կէտերը և ժողովականներին հրա-ւիրեց անցնել ընտրութեան գործին։ Ընտրուելու էին կոմիտէի (վարչութեան) 5 անդամ և 2 փոխանդամ, վերա-ստուգիչ Ցանձնաժողովի 3 անդամ և 2 փոխանդամ։

Ժողովին ներկայ եղող իսկական անդամներից ընտրութիւններին մասնակցում էին 19 հոգի. պ. Ֆ. Սուրէնեան մշտական ընակութիւն հաստատած լինելով Թիֆլիսից դուրս, հրաժարուեց քուէարկուելուց։

Գաղտնի քուէարկութեամբ Վարչութեան անդամներ ընտրուեցին՝

1) պ. Եղիշէ Թադէոսեան 17 ձայնով
2) » Դաւիթ Զիլեան 17 ձայն (կրկ. քուէար.)
3) » Գարեգին Լեւոնեան 16 ձայն
4) » Փանոս Թերլեմեզեան 15 »
5) » Գրիգոր Շարբաբչեան 15 »

Փոխանդամներ ընտրուեցին

1) պ. Միքայէլ Խունունց 14 ձայն
2) » Մարտ. Սարեան 13 »

Վերաստուգիչ Ցանձնաժողովի անդամներ ընտրուեցին

1) պ. Սարգիս Խաչատրեան 15 ձայն
2) » Վրթանէս Ախիկեան 14 »
3) » Համբ. Կարապետեան 14 »

Փոխանդամների ընտրութիւնը չրկայացաւ պակաս ձայներ ստանալու պատճառով։

Ժողովականները վերջում շնորհակալութիւն յայտ-նեցին նախագահող պ. Շիրվանզադէին և սկսեցին ցրուել մօտ ժամ 3-ին։

Նախագահ Ընդհանուր Ժողովի՝
Շիրվանզադէ

Քարտուղար՝
Գ. Լեւոնեան

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԱՇԻՒԸ

Հայ Արուեստագէտների Միութեան Ինվեստարը առ 1 մայիս 1917 թ.

ԳՈՅՔ (Active)

		ր.	կ.	ր.	կ.
Առձեռն դրամ		131	89		
Երկր. վարկի ընկ. ընթ. հաշ.		4900	—	5031	89
Շարժ. գոյք (առանձին ցուցակ.)				680	—
Մրցանակներ	Ափրիկեան Տիգր.	500	—		
	Էնֆիաճեան Արտ.	250	—	750	—
				6461	89

ՊԱՐՏՔ (Passive)

	ր.	կ.	ր.	կ.
Գրամագլուխ	5711	89		
Մրցանակներ	750	—	6461	89

Վերասուգիչ յանձնաժողովի անդամներ՝

Ճարտարապետ Հ. Կարապետեան
Նկարիչ Ս. Խաչատրեան
» Վ. Ախիկեան

Նախագահ՝ Ե. Թադէոսեան
Գանձապահ՝ Գ. Շարբաբչեան

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ 1916—17 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՀԱՇԻՒ

ՄՈՒՏՔ I ԴՐԱՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹԻՒՆ 1916—1917 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ **ԵԼՔ**

ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻՑ	Իսկական	190	—		
	Օժանդակիչ	790	—	980	—
ՆՈՒԷՐՆԵՐԻՑ և ԿՏԱԿՆԵՐԻՑ	Աֆրիկեան Խ. Տ.	1000	—		
	» » »	500	—		
	» » »	200	—		
	Մելիքեան Հ. Ս.	100	—		
	Էնֆիաջեան Մ.	100	—		
	Բունիաթեան Մ.	100	—		
	Մելիքեան Ա. Պ. յիշ.	50	—		
	Սարեան Մ.	25	—		
	Ղուլեան Լ.	15	—		
	Գիւրջեան Յ.	3	—	2093	—
Դասախօսութիւնից				33	60
% % Երկր. Վարկի ընկ.				12	50
Ցուցահանդէսից (մաքուր եկամուտ)				2883	39
				6002	49

Լուսանկարներ և նեղատիպեր	483	—		
Կլիշէներ և կնիք	20	—	503	—
Մրցանակներ			150	—
Յայտարարութիւններ լրագրական			74	—
Տպագրական ծախքեր			68	75
Դասախօսութեան ծախքեր			60	—
Դիւանական »			56	—
Բաժանորդագրութիւն			10	—
Փոստ հեռագիր և ուրիշ մանր ծախքեր			48	85
Դրամարկղից մնացորդը առ 1-մայիս 1917 թ.				
Առձեռն դրամարկղ	131	89		
Երկր. Վարկի ընկ. ընթ. հաշիւով	4900	—	5031	89

Մուտքի տոմսակների վաճառումից	4911	05		
%/% նկարների վաճառուից	1799	50	6710	55
			6710	55

Լրագրակ. յայտարարութիւնների և տպագրական գործեր	682	50		
Վառելիք և լուսաւորութիւն	630	60		
Վարպետներին Բանուորներին Ծառայողներին — վարձատրութիւն	502	90		
Զանազան իրեր (Շարժ. գոյք)	356	96		
Պատերազմ. հարկի մարկաներ	433	10		
Երաժշտախումբ	320	—		
Ընթացիկ և մանր ծախքեր	297	28		
Իրեր տեղափոխելու	16	—		
Դիւանական ծախքեր	132	42		
Բանկէտ	455	40	3827	16
			3827	16
Մաքուր մուտք			2883	39
			6710	55

Նշ. Միլեանների հետ պայմանաւորուած էր ցուցահանդէսի շինութեան վարձ վճարել 1000 ր.—Բայց այս գումարը եղբ. Միլեանները նուիրեցին Ընկերութեան։

Նախագահ՝ Ե. Թադէոսեան

Գանձապահ՝ Գ. Շարքաքչեան

Դրամարկղի մնացորդը առ 1 մայիս 1917 թ.				
Առձեռն դրամ	131	89		
Երկր. Վարկի ընկ. մէջ ընթ. հաշուով	4900	—	5031	89
40 իսկական անդամներից			200	—
60 օժանդակիչ »			600	—
5 մշտական »			500	—
Դասախօսութիւններից			300	—
Ցուցահանդէսից			2000	—
Նուէրներից			1000	—
Միութեան դումարների % %			200	—
Մրցանակի դումարներից			750	—
Գեղարուեստական ալբոմի վաճառումից			3000	—
			13581	89

Բնակարանի վարձ տարեկան			1200	—
Ռոճիկներ — Գործավար	720	—		
Ռոճիկներ — Ծառայ	280		1000	—
Լուսաւորութիւն և վառելիք			150	—
Դասախօսութեան ծախքեր			150	—
Դիւանական ծախքեր			100	—
Պոստ-հեռագիր			50	—
Տպագրութիւն, լրագրական յայտար.			300	—
Գեղարուեստական հանդէսներ և գրքեր			300	—
Մրցանակի դումարներ			750	—
Կազմակերպուելի արհեստանոցի նախապատրաստական ծախքեր			1000	—
Ալբոմի հրատարակութեան ծախս			2000	—
Ճարտարապետական սեկցիային			500	—
			7650	—
Յաւելում			5931	89
			13581	89

ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԵԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄԸ

Մենք վերաստուգիչ ժողովի անդամներս քննելով Հայ Առուեստագէտների Միութեան մուտքի և ելքի բոլոր հաշիւները, այսինքն այն գումարները, որոնք Ընկերութեան Վարչութիւնը ստացել է և ծախսել է 1916—17 թուի ընթացքում մինչև ապրիլ 20-ը, ստուգեցինք և գտանք, որ կատարուած են, համաձայն Ընկերութեան կանոնագրութեան, ուղիղ կերպով, և հաշուեյարդարումը անսխալ և կատարեալ։

Ձարպետ. Հ. Կարապետեան
Նկարիչ Ս. Խաչատրեան
« Վ. Ախիկեան

ՀԱՅ ԸՐՈՒԵՑՏԵՓԻՏՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱԶՄԸ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Անդամներ՝ Եղիշէ Թադէոսեան նախագահ
Դաւիթ Զիսլեան փոխ-նախագահ
Գարեգին Լեւոնեան քարտուղար
Գրիգոր Շարբաբչեան գանձապահ
Փանոս Թէրլէմէզեան

Փոխ-անդամներ՝ Մարտիրոս Սարեան
Միքայէլ Խունունց

ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝
Համբարձում Կարապետեան
Սարգիս Խաչատրեան
Վրթանէս Ախիկեան

ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Արիստոդոմեան Միքայէլ Թիֆլիս
Ախիկեան Վրթանէս »
Աղաջանեան Ս. Նոր-Նախիջ.
Այվազեան Ա. Մոսկվա
Արծաթբանեան Հմյկ. Ն.-Նախիջևան
Գաբայեան Ստեփան Թիֆլիս
Գայֆէճեան Վահրամ Ախալցխա
Գէորգեան Սոֆիա Մոսկվա
Գիւրճեան Յակոբ »
Երկանեան Սարգիս Թիֆլիս
Զուրաբեան Պողոս »
Թադէոսեան Եղիշէ »
Թայիրեան Սվետլանա »
Թէրլէմզեան Փանոս »
Թօրամանեան Թորոս Ալէքսանդրապոլ
Լեոնեան Գարեգին Թիֆլիս
Խաչատրեան Սարգիս »
Խունունց Միքայէլ »
Կարապետեան Համբարձում »
Կեպինեան Գրիգոր »
Հազարապետեան Լեան Էջմիածին
Հալաճեան Գարեգին Թիֆլիս
Մարգարեան Կոստանդին »
Մելիք-Կարագեոզեան Տ. »
Միանսարեան Գէորգ »
Միրզոյեան Ալէքսանդր »
Միքայէլեան Միքայէլ »
Յակոբեան Հմայեակ »
Յովհաննիսեան Յովակ. Նոր-Նախիջ.
Շահմազեան Աոսէն Թիֆլիս
Շարբաբչեան Գրիգոր »
Զիսլեան Դաւիթ »
Պատկանեան Եղիսաբէթ »
Սարեան Մարտիրոս Նոր-Նախիջևան
Սուրէնեանց Վարդգէս Պետրոգրադ
Տարագրոս »
Տէր Մարուքեան Անդր. Պարիզ
Տէր-Միքէլեան Գաբր. Թիֆլիս
† Տէր-Սարգսեան Քրիս. »

ՕԺԱՆԴԱԿԻՉ ԱՆԴԱՄՆԵՐ

Աբուլեան Գէորգ
Անանեան Վլադիմիր
Առաքելեան Համբարձում
Ասլամազեան Նինա
Իշխ. Արղութեան Երկայնաբազ. Բօրիս
Արունեան Թէոս (Բաղու)
Աւան-Իւզբաշեան Դաւիթ-խան
Աւան-Իւզբաշեան Տիկին
Աֆրիկեան Խաչատուր
Աֆրիկեան Եղիսաբէթ
Բէրբէրեան Մինաս
Բէրբէրեան Մարիամ
Բունիաթեան Մենտոր
Գայֆէճեան Պերճ
Գարեգին եպիսկոպոս
Գէորգեան Մամիկոն
Գիւզալեան Տիգրան
Զարգարեան Արիստակէս բժ.
Զարգարեան Ստեփան

Զաւրեան Դաւիթ
Զաւրեան Զաքէլ
Էգիլեան Գուրգէն
Էնֆիաճեան Գրիգոր
Թայիրեան Իւլիա
Թումանեան Յովհաննէս
Խատիսեան Աշխէն
Ղորղանեան Եղիսաբէթ
Ղորղանեան Անտոն
Ղուլեան Լեոն
Մատէնճեան Մամբրէ
Մարտիրոսեան Հայկանոյշ
Մելեան Արմանոյշ
Մելիքեան Համբարձում
Միրիմանեան Ալէքսանդր
Յարութիւնեան Արմենակ
Շիրվանզադէ
Պապովեան Ալէքսանդր
Պոնդոյեան Գաբրիէլ
Սողոմոնեան Սուրէն
Սողոմոնեան Օլգա
Սպենդիարեան Իւլիա
Տէր-Սարգիսեան Սամսոն
Վահանեան Հմայեակ
Փրիդոնեան Լեոն
Փրդիոնեան տիկին

Նախագահ վարչութեան՝

Եղիշէ Թադէոսեան

Անդամ եւ քարտուղար՝

Գարեգին Լեոնեան

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL011786